

սկսած էին յաճախել եւ լայն էջեր նուաճել: Հ. Ս. Տէրվիչեանի Սեպագիր արձանագրութիւնք (1887—1889), Գեր. Այալնեանի Տառադարձութեան խնդիրը (1888—1889), Հ. Յոփնանեանի Հետադասութիւն նախնեաց ուսման (1888—1895), Հ. Գալէմբաբեանի Պատմութիւնն Հայ լրագրութեան (1887—1890), Հ. Տաշեանի Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենէսի Աղեքսանդրի վարուց պատմութեան (1891) եւ Ազատականագիտութիւնը (1890) եւն եւն լուրջ աշխատութիւններ էին. երեւցան հոն յընթաց տարիներու Ա. Սարուխանեանի, Դոկա. Վ. Թորգոմեանի, Հ. Աճառեանի, Բ. Կիւլէսէրեանի, Նորայր Բիւզանդացւոյ, նաեւ A. Carrièreի, Ն. Մառի, J. Marquartի, Կ. Կոնիքիւրի եւ ուրիշ բազմաթիւ Հայ եւ օտար մասնագէտներու գրիչներէն աշխատասիրութիւններ: Այս եւ նման հեղինակներ եւ ուսումնասիրութիւններ ընծայած էին «Հանդէս Ամսօրեայ»ի հայագիտական նկարագիր: Փոխուած էր արդէն բաժանորդներու ալ որակն եւ ժամանակին ալ ճաշակը:

Բարեկամ մը 1894ին համարձակութիւն կ'առնէր գրելու Խմբագրութեանս, թէ Ազգը վէպեր, բանաստեղծութիւններ, նաեւ քաղաքական տեսութիւններ բաւականէն աւելի կ'ըմբոշին ժամանակակից ուրիշ ամսագիրներէ եւ օրաթերթերէ. իսկ Մխիթարեան Հայրերէ կ'ակնկալէ միայն Հայ մշակոյթի պատմութեան նուիրուած լուրջ ուսումնասիրութիւններ, բան մը, զոր ուրիշներ ի վիճակի չեն հայթայթել:

Ազգարարութիւնս հաճոյքով լսուեցաւ Խմբագրութեան կողմէ: 1895էն սկսեալ ամբողջապէս նուիրուեցաւ «Հանդէս Ամսօրեայ» հայագիտութեան, թէպէտ եւ «հայագիտական ուսումնասիրութիւն» յորջորջումը պաշտօնապէս ստացաւ 1912ին:

Հաւատարիմ իր ընտրած ուղղութեան ընթացաւ «Հանդէս Ամսօրեայ» իւր ճանապարհին վրայ առանձին: Կային հրատարակի վրայ «Բազմավէպ», «Արարատ» եւ ուրիշ շատ հանդէսներ, բայց կը հետեւէին անոնք աւելի կրթական եւ գրական ուղղութեան: Ելան հրատարակ նաեւ նորեր, «Ազգագրական Հանդէս», «Բանասէր», Zeitschrift für armenische Philologie (Հանդէս հայագիտութեան), Revue des Etudes arméniennes, Armeniaca եւն, կոչուած ծառայելու հայագիտութեան, բայց չկարողացան գիմանալ անձրեւի եւ բուքի. եւ խամրեցան ոմանք վաղաժամ, ուրիշներ հասնելով երիտասարդութեան, նաեւ կատարեալ հասակի: Անոնց երեւումը, սակայն, ապացոյց էր, թէ արթնցած էր ճաշակ հայագիտական ուսմանց, կային հայագիտական ասպարէզի վրայ հայագէտ գործիչներ, որոնք կ'ուզէին արտայայտուիլ եւ կ'որոնէին մրցարան:

«Հանդէս Ամսօրեայ» կրցաւ կուրծք տալ դժուարութիւններու, յարատեւեց իր ճանապարհին վրայ, որովհետեւ յեցած էր Մխիթարեան Միաբանութեան վրայ:

Մխիթարեան Միաբանութիւնը հայթայթեց իրեն ոչ միայն

նիւթական միջոց, այլ եւ գիտուն, հայագէտ աշխատակիցներ: Յընթաց ժամանակի յարեցան անոնց կարող ոյժեր, ազգայիններէ եւ օտարներէ. եւ «Հանդէս Ամսօրեայ» ներկայացաւ ժամագրավայր մը բանասէր-հայագէտներու: Անոնք քննադատութեան ջանն ի ձեռին մերձեցան հայագիտական բազմակնճիւ հարցերու, լուծեցին բազմահանգոյց խնդիրներ, եւ պարզեցին Ուսումնասիրութիւն լուրջ նկարագիր եւ ճոխ բովանդակութիւն: Կաթիլները, կ'ըսէ առածը, կը կազմեն լճեր: Այդ կաթիլներն են, որոնք կաթեցին 50 տարիներ «Հանդէս Ամսօրեայ»ի ծոցն եւ լճացուցին 50 հատորներ: Կը բաւէ այդ 50 հատորներու վրայ նետել հարեւանցի ակնարկ, ականելու համար հոյլը այն աշխատակիցներու, որոնք ինչպէս մեղու կրեցին փեթակը հիւթանիւթ գործելու մեղր. անոնց թուին մէջ կը փայլին բարձրաստիճան եկեղեցականներ, ականաւոր ուսուցչապետներ, հմուտ ուսուցիչներ, ներհուն գրագէտներ, ամէն ազգէ եւ ամէն լեզուէ: Անոնց մտքի ստեղծագործութիւններն են շարքերը յօդուածներու, գոյնով՝ բազմբանգ, որակով՝ ընտիր եւ մեծարժէք:

Կայ այդ շարքերուն մէջ հարուստ թիւ մ'ալ թարգմանածոյ յօդուածներու, որովհետեւ ջանացած է «Հանդէս Ամսօրեայ» տեղեակ պահել իւր ընթերցողները Հայ շրջանէն դուրս կատարուած հայագիտական արժէքաւոր աշխատասիրութիւններու, երբեմն ամբողջական եւ երբեմն քաղուածաբար թարգմանութեամբ:

Առանձին նախասիրութեամբ ուշադրութիւն դարձուցած է «Հանդէս Ամսօրեայ» հին եւ պատմական Հայաստանի աշխարհագրութեան եւ երկրախօսութեան, Հայոց պատմութեան նախաւոր պահել իւր ընթերցողները Հայ շրջանէն դուրս կատարուած հայագիտական արժէքաւոր աշխատասիրութիւններու, երբեմն ամբողջական եւ երբեմն քաղուածաբար թարգմանութեամբ:

«Հանդէս Ամսօրեայ» ընթացաւ այս աշխատանքի ճանապարհին վրայ միշտ որոնող եւ հետադասող աչքերով, ի խնդիր Հայ մշակոյթի նշմարներու: Երբ պատահեցաւ անոնց, դիտեց անաչառ քննադատութեամբ. հիացաւ Հայ մշակոյթի հարագատ ստեղծաքննադատութեամբ. հիացաւ Հայ կեդծիքը դատափետեց անխնայ: գործութիւններու վրայ. բայց կեդծիքը դատափետեց անխնայ: Եղաւ թերեւս երբեմն խիզախ իր դատաստաններու մէջ, նաեւ յանցողութեան երբեմն խիզախ իր դատաստաններու մէջ. բայց աւելի յաճախ այսպէս դուզն իր արտայայտութեանները: Անխուսափելի էր անշուշտ դատուեցան իր եզրակացութիւնները. բայց այս կարծեաց երգիտնոց մէջ կարծեաց տարբերութիւնը. բայց այս կարծեաց երկուութիւնը շատ կէտերու մէջ հաշտեցուց ժամանակը:

Այսօր, «Հանդէս Ամսօրեայ»ի 50րորդ տարեդարձին, եթէ թոյլ կու տանք մեզ այս անդադարձութիւնները, այսու ոչ թէ Ուսումնասիրութիւն գովութիւնը հիւսել կը ձգտինք, այլ միայն վերահանել կ'ուզենք կատարուած գործ մը, որուն կարեւորութեան

խելամտութիւնը կարող է թեւ տալ նոր սերունդին, նոր եռանդով յառաջ մղելու ձեռնարկութիւնը: Եթէ մեր նախորդները եղան հայագիտութեան համար այնքան արդիւնաւոր, կը ծանրանայ նաեւ մեր վրայ պարտք նախանձաւոր ըլլալով անոնց, լծուիլ սուրբ նախանձով նոյն գործին եւ շարունակել արօրագիր ակօսարեկ ընել հայ մշակոյթի լայնածաւալ դաշտը: Ամէն վաստակ պիտի ունենայ իւր արդիւնքը: Եւ այս արդիւնքը պիտի ըլլայ ժառանգութիւնը յաջորդող սերունդին:

Յորելեանս միաժամանակ յորելեանն է Հայագիտութեան, որ ձեւ եւ կերպարանք զգեցաւ «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ:

Ի՞նչ է, սակայն, Հայագիտութիւնը: Նոր կերտուած բառ մը, որ կ'ընդգրկէ հայ մշակոյթին հայող ամէն հարց եւ խնդիր: Հայագիտութիւնը կը հետազօտէ հայ Աշխարհը իւր պատմական սահմաններու մէջ, հայ լեզուն իւր զարգացման ճանապարհի վրայ եւ հայ մարդը իւր ստեղծագործութիւններու մէջ: Կ'ուսումնասիրէ հայ Մշակոյթի գանազան ծալքերը, խորշերը, փուլերը: Ծանօթը կը ճշդէ, անծանօթը կը յայտնէ, խաւարը կը փարատէ, կեդծիքը դիմակագերծ կ'ընէ. կը դիտէ հայ Մշակոյթի աւելի քան 2500 տարիներու պատմութիւնը գիտութեան լոյսի տակ, իր սեպհական տարազի եւ կերպարանքի մէջ: Կը պեղէ հայրենի հողը, կը քրքրէ աւերակները, կ'առեղծու յուշարձանները, կը հետազօտէ նախնեաց դրաւոր մնացորդները, կը հարցաքննէ կենդանի աւանդութիւնը: Կը հետաքննէ դրացի եւ հեռաւոր ժողովուրդներու քով նշմարներ հայ ժողովուրդի մասին, օտարին վկայութիւնը կը համեմատէ տոհմային աւանդութեան հետ, կը չափէ, կը կշռէ երկու եզրները, լուսարանելու համար իրականութիւնը: Այս ամէնը լուրջ շրջահայեցութեամբ, անհաստատելի, անկաշառ, անաշառ: Կը փնտռէ ճշմարտութիւնը. երբ կը հասնի ստուգութեան, կը դաւանի զայն համարձակ եւ աներկիւղ: Իր լուսատուն՝ առողջ քննադատութիւնն է, չափանիշը՝ աննենգ կշիռը դատողութեան:

Եթէ այս է հայագիտութեան սահմանը, բովանդակածն եւ յօրինուածքը, ինքնին հասկանալի է, թէ որքան ծանր եւ պատասխանատու աշխատանքներ վիճակուած են հայագէտին, նաեւ հայագիտական ուսումնաթերթին: Անխոնջ ջանասիրութեամբ կը խորասուզուի հայագէտը դարաւոր անցելոյն անյատակ անդունդները, կը աքնի, կը ճգնի առաջագիր խնդրոյն շուրջը լոյսի ի խնդիր: Եւ եթէ յաջողեցաւ իւր որոնումներու մէջ եւ դրաւ իւր քննութիւններու արդիւնքը ի ցոյց, ահա կը կանգնի իրեն դէմ աւանդամոլութիւնը ոտիս: Կ'ընդխառնուին լոյսն եւ խաւար ի գուպարած: Անշուշտ լոյսին է վերջնական յաղթութիւնը. բայց զուր տեղ կը վանուին ոյժ եւ ուղմամթերք: Այսպիսի գերշամարտներու ուղմագաշտը յաճախ Ուսումնաթերթը կ'ըլլայ:

Հաւաքեց «Հանդէս Ամսօրեայ» քաջարի հայագէտներու ընտիր

թիւ մը իր շուրջ. կերտեց անոնց օժանդակութեամբ Հայագիտութեան ամբակուռ ամբոցը, անքոյթ եւ անառիկ: Տեղի ունեցաւ ժամանակ առ ժամանակ անոր պարիսպներու առջեւ բուռն ճակատամարտներ, բայց պաշտպանեց «Հանդէս Ամսօրեայ» իւր դատը կորովով՝ միշտ ի նպաստ հայ մշակոյթի շահերուն:

Այդ ամբոցին 50 աշտարակներն են «Հանդէս Ամսօրեայ»ի 50 հատորները, եւ բերդապահները՝ արթուն դուարթուն աշխատակիցները Ուսումնաթերթին:

Արդիւնքները, գործնք շտեմարանեց «Հանդէս Ամսօրեայ» յընթացս 50 տարիներու իւր ծոցը, ըստ մասնէ տաշուած, ձեւուած ատաղձներ, շինանիւթեր են, այն հոյակապ կառուցուածքներու համար, զորոնք կը դիտէ Հայագիտութիւնը բարձրացնել հայ Մշակոյթի լայնանիստ դաշտին վրայ: Կը պահանջէ արդի գիտութիւնը, որ ունենայ Հայագիտութիւնը իւր մասնաճիւղերու համար ուրոյն ուրոյն ապարանքներ, Գրականութիւնը իւր քննական Պատմութիւնը, լեզուն իւր քննական Քերականութիւնն եւ ստուգաբանական Բառարանը, այսպէս իրենց կարգին Պատմութիւնը, Աշխարհագրութիւնը, Աղագրութիւնը, Հնախօսութիւնը, Հնագրութիւնը, Գեղարուեստը եւ այլն: Առանց մասնական աշխատանքներու մասնագէտներու կողմէ տարուած, առանց շահագործելու արու մասնագէտներու կողմէ տարուած, առանց «Հանդէս Ամսօրեայ»ի, դէն կատարուած աշխատանքները, ըլլայ «Հանդէս Ամսօրեայ»ի, ըլլայ ուրիշ Ուսումնաթերթերու եւ ձեռնարկներու մէջ, զուր է ակնկալել օգտաբեր կառուցուածք մը հայագիտական Մարզին մէջ:

Նկատի առնելով այս տեսակէտները, ըմբռնելի պիտի ըլլայ նշանակութիւնը տօնախմբութեանս, զոր հաւաքուած ենք տօնելու «Հանդէս Ամսօրեայ»ի հրատարակութեան յիսներորդ տարեգարծին առթիւ:

Այսպէս ծծեց «Հանդէս Ամսօրեայ» 50 տարիներ նշոյլները ծագող Արշալոյսին եւ միջօրէի կիզիչ ճառագայթներու տակ հասցուց հունձը:

Ճառագայթեց լոյս մտքերուն, լուսաւորեց ծալքերն ու խորշերը անցեալ ժամանակներու, լուսով ողողեց ներկան եւ տեսանելի ըրաւ ուղին ապագային:

Ապրեցաւ եւ գործեց «Հանդէս Ամսօրեայ» 50 տարիներ. եւ հակառակ իւր հասակին կը զգայ ինք զինքը առոյգ՝ ընթանալու յառաջ նոյն ճանապարհով, միշտ լուսաւորելով ոտնակոխ ուղին:

Լոյսը, զոր ճառագայթեց իւր ծոցէն, երկփեղկեց անցեալին մոյգ վարագոյրը. եւ պարզուեցաւ մեր աչքերուն բնաշխարհը մեր պաշտելի նախնիներուն, առլցուն փառապանծ յիշատակներով, բայց նաեւ տխրազգած արարուածներով: Խօսեցան աւերակները, բայց նաեւ լուսաւորեցաւ մագաղաթը, եւ լսելի լեզու առին յուշարձանները, բացուեցաւ մագաղաթը, եւ լսելի եղաւ ոսկի բարբառը թագազարդ վեհապետներու եւ հայրապետներու, գողտրիկ հնչիւնը շինանիստ ժողովուրդին եւ գեղօնները:

անոնց նուրբ սրտերուն: Դուրս կարկառեցան շիրիմներէն հայ դիւ-
ցազները գէնքի եւ գրչի եւ պճնուեցան միւսանգամ պսակազարդ:

Յիսուն տարիներ «Հանդէս Ամսօրեայ»ի հովանւոյն տակ վաս-
տակեցան քրտնաթոր հայ գրչի մշակներ եւ օտարաշխարհիկ ա-
րուեստագէտներ, ահօսածիգ պատանեցին հայ մշակոյթի կորդ
հողը եւ վարուն գործեցին դայն, ուր արդիւնաբեր եղան սերմանիք
եւ հունձքը կրուեցաւ հայ մշակոյթի ծոցը:

Յիսուն տարիներ կրեցին կարաւաններ հեռաւոր աշխարհներէ
հակերով բեռներ՝ ճոխացնելու հայ մշակոյթը նորահաս բերքերով,
նպաստաւորելու հայ աշխարհի մտաւոր տնտեսութեան:

Յիսուն տարիներ ելան հասկաքաղներ գիտութեան արտո-
րայքը, որոնելու հասկեր հայ եւ օտար գրականութեան մէջ, օգ-
տաբեր Հայագիտութեան:

Իսկ Հայագիտութիւնը, որ աճեցաւ եւ ուռճացաւ «Հանդէս
Ամսօրեայ»ի հովանւոյն տակ, եղաւ ինքնուրոյն գրական ճիւղ մը
գիտութեան հաստարուն ծառին վրայ:

«Հանդէս Ամսօրեայ»ի էջերու մէջ անմահ պիտի մնան անուն-
ները այն մշակներու, որոնք թափեցին քրտինք, ստեղծագործեցին
արդիւնքներ ի նպաստ տոհմային մշակոյթի պատմութեան:

Անմոռաց պիտի մնայ «Հանդէս Ամսօրեայ»ի էջերու մէջ նաեւ
Յիշատակը անոնց, որոնք նպաստամատոյց եղան նիւթապէս եւ բա-
րոյապէս Հայագիտութեան եւ հայ մշակոյթի մեծ շէնքին կա-
ռուցման:

Պարտք կը համարիմ, իբրեւ անարժանաբար խմբագրապետ
«Հանդէս Ամսօրեայ»ի, այս հանդիսաւոր պատեհութեանս, յայտ-
նել Խմագրութեանս սրտազին շնորհակալութիւնը Վիեննայի
Մեծարդոյ Միթիթարեան Միաբանութեան յանձին Գեր. Արբահօր,
որ 50 տարիներ յանձն առաւ հովանաւորել Ուսումնաթերթս, քա-
ջալեր հանդիսանալ անոր բարոյապէս եւ նիւթապէս. ոչ անձրեւք,
ոչ ձիւնաբերք չդեղեւեցին զինքը սիրայօժար զոհաբերելու յանուն
Հայագիտութեան աւելի քան 4000 անգլիական ոսկի, յընթացս այս
50 տարիներու, գոցելու համար Ուսումնաթերթիս տարեկան բա-
ցերը: Առատաձեռն եւ զուարթատուր զոհաբերութիւն մը հայ
մշակոյթի խորանին վրայ, որուն համար պարտաւոր ենք մեր
հիացմունքի հետ յայտնել մեր շնորհակալիքը Միաբանութեան:

Երախտագէտ սրտէ շնորհակալութիւն նաեւ «Հանդէս Ամսօ-
րեայ»ի այն բարերարներու, որոնք ժամանակ առ ժամանակ Մե-
հենաս հանդիսացան, օժանդակելու անոր հրատարակութեան
ծախքերուն, կը յիշեմ Յովհաննէս Պալեան (1911), Բարգէն Եպիս-
կոպոս (ապա՝ Կաթողիկոս) Կիւլէսէրեան (1920), Պօղոս Նու-
պար Փաշա (1927) եւ Գալուստ Կիւլպէնկեան (1928—1930) բարե-
գործ անունները:

Գործը ունի սակայն դեռ իւր պահանջները. մինչ մշակը կիզիչ

արեւին տակ կը հերկէ ու կը ցանէ, անդին տէրը յուսով հունձքին
կը վարձատրէ վաստակը: Նոյնն է վաստակը հայագիտական աս-
պարէզին վրայ: Ազգին է արդիւնքը, Ազգը պէտք է ըլլայ եւ վաս-
տակին վարձատրոյցը: Իւրաքանչիւր անհատ, որ կը գտնուի ազ-
գային դրօշի տակ, յանուն այդ դրօշին պէտք է բերել իւր լուծան
հայ մշակոյթի դրօշակիրներուն: Ձեռն ի ձեռն գործակցութիւնը
հայ մշակոյթի մեծ շէնքի կառուցման համար, ինչպէս կը հաւա-
տամ, պիտի պսակուի փառապանծ արդիւնքով:

Vortrag.

Von P. DR. VAHAN INGLISIAN.

Hochansehnliche Festversammlung!

Das armenische Volk, das über 2500 Jahre in seiner heutigen Heimat
ansässig ist und auf eine mehr als 2000jährige Kultur und ein um nur wenige
Jahrhunderte jüngerer Schrifttum zurückblickt, hat in diesem langen Zeitraum
manche kulturelle Auf- und Abstiege erlebt, nach der günstigen oder ungün-
stigen Auswirkung der jeweiligen politischen Verhältnisse. Dieses alte indo-
germanische Volk, dem als Lebensraum sozusagen eine politische Landstraße
zugewiesen worden war — bildete doch Armenien einst den Knotenpunkt des
uralten Verbindungsweges nach dem Iran und Mesopotamien und wurde mit
Recht der Schlüssel Asiens genannt — war dadurch auch den ver-
schiedensten schweren Schicksalsschlägen ausgesetzt und wäre zu einem heute
nur mehr geschichtlichen Volke geworden, besäße es nicht eine besondere in-
nere Daseinskraft, die es aus seiner sittlichen Gesundheit und aus seinem na-
tionalen Selbstbewußtsein schöpft.

Was diese beiden Stützpfiler der Lebensfähigkeit eines Volkes bedeuten,
erfaßte mit der ganzen Tiefe und dem Weitblick eines Gottbegnadeten Me-
chithar, der Gründer der Mechitharisten-Kongregation, und aus dieser
Erkenntnis gab er dieser Kongregation die ihr eigene Richtung und die ihr
eigene Betätigung auf dem Gebiete der Seelsorge und der Schule, die darin
gipfelt, dem Volke seine moralische Gesundheit zu erhalten, es auf seiner sitt-
lichen Höhe zu bewahren, und durch wissenschaftliche Arbeit zu trachten, daß
das armenische Volk mit seinen Vorfahren, seiner ruhmreichen Vergangenheit
verbunden werde und verbunden bleibe. In diesem Sinne hat der Stifter selbst
gearbeitet und seine Söhne haben diese Arbeit fortgesetzt. Schon die Mechi-
tharisten in Venedig haben in dieser Hinsicht viel geleistet. Im Lichte vorur-
teilsfreier Kritik das armenische Volk in seiner Geschichte und Literatur zu
studieren, war aber den Mechitharisten von Wien vorbehalten, wo
deutsche Nüchternheit der Denkungsart die geeignete Atmosphäre dazu schuf.

Schon in den vierziger Jahren des vorigen Jahrhunderts haben — als
erste Frucht dieser Arbeit — die Wiener Mechitharisten durch die Entdeckung
des Klassisch-Armenischen und die Klassifikation desselben die Gelehrtenwelt